



«MEDI-CAL»-ԻՆ ԱՆՅՐԱԺԵՇՏ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՄՈՒՏԻ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մենք դեռ գնահատում ենք «Medi-Cal»-ի Ձեր իրավասությունը, և մեզ լրացուցիչ տեղեկություններ են անհրաժեշտ: Խնդրում ենք պատասխանել ստորև տրված հարցերին՝ Ձեր ընտանիքի անդամ հանդիսացող յուրաքանչյուր անձի մասին: Դա ներառում է Ձեզ, Ձեր կնոջը կամ ամուսնուն և Ձեզ հետ բնակվող մինչև 21 տարեկան երեխաներին կամ ընտանիքի որևէ այլ անդամի, որը ժամանակավորապես Ձեր տանը չի բնակվում, օրինակ՝ դպրոցում է, աշխատանքի բերումով բացակայում է կամ հիվանդանոցում է գտնվում:

Գործի անունը՝ _____

Գործի համարը՝ _____

Աշխատողի անունը՝ _____

Աշխատողի հեռախոսի համարը՝ _____

Ուղարկելու ամսաթիվը՝ _____

Վերադարձրեք այս թերթիկը մինչև՝ _____

Ընտանիքի մասին պահանջվող լրացուցիչ տեղեկություններ

Հետևյալ լրացուցիչ տեղեկություններն անհրաժեշտ են: Պատասխանեք միայն այն դեպքում, եթե այս էջում նշված հարցերը վերաբերում են Ձեզ կամ Ձեր ընտանիքի որևէ անդամի:

Խնդրում ենք նշան դնել այստեղ, եթե Դուք կամ Ձեր ընտանիքի որևէ անդամ պաշտոնապես ամուսնացած է, բայց ներկայումս կնոջից կամ ամուսնուց առանձին է ապրում:

Եթե նշան եք դրել վանդակում, խնդրում ենք նշել Ձեր ընտանիքի այն անդամի անունը, որն իր կնոջից կամ ամուսնուց առանձին է ապրում:

Խնդրում ենք նշան դնել այստեղ, եթե Դուք կամ Ձեր ընտանիքի որևէ անդամ խորթ ծնող է:

Եթե նշան եք դրել այս վանդակում, խնդրում ենք նշել՝

խորթ ծնողի անունը՝ _____

այդ խորթ ծնողի երեխաներին՝ _____

Խնդրում ենք նշան դնել այստեղ, եթե Ձեր ընտանիքի որևէ անդամ երեխա է, որին խնամում է ո՛չ թե ծնողը, այլ Ձեր տանը բնակվող որևէ ազգական:

Եթե նշան եք դրել այս վանդակում, խնդրում ենք նշել՝

խնամող ազգականի անունը՝ _____

խնամվող երեխաները՝ _____

Մեզ տեղեկություններ տրամադրեք Ձեր եկամուտի և ծախսերի մասին

Մեզ տեղեկություններ տրամադրեք Ձեր եկամուտի և ծախսերի մասին, որոնք կապված են Ձեզ, Ձեր կնոջ կամ ամուսնու և Ձեզ հետ բնակվող մինչև 21 տարեկան երեխաների կամ ընտանիքի որևէ այլ անդամի հետ, որը ժամանակավորապես Ձեր տանը չի բնակվում, օրինակ՝ դպրոց հաճախելու, աշխատանքի կամ հիվանդանոցում գտնվելու պատճառով:

Եկամուտը

Խնդրում ենք նշան դնել **Այո** կամ **Ոչ** վանդակում, եթե Ձեր ընտանիքի անդամներից որևէ մեկը ստորև նշված տեսակի եկամուտ է ստանում:

Նշան դրեք եկամուտի յուրաքանչյուր տեսակի դիմացի վանդակում:

Անաշխատունակության նպաստներ Այո Ոչ

Վետերանների նպաստներ Այո Ոչ

Երեխայի ապրուստադրամ Այո Ոչ

Նվերներ Այո Ոչ

Եթե վերը նշվածներից որևէ մեկին **Այո** եք պատասխանել, խնդրում ենք այս թերթիկի հետ եկամուտի ապացույց ուղարկել: Ապացույց կարող են հանդիսանալ հետևյալ փաստաթղթերը. «Social Security Administration»-ից, «Veteran's Administration»-ից «Employment Development Department»-ից ստացած մամակները կամ հայտարարությունները, երեխայի ապրուստադրամի վերաբերյալ դատարանի որոշումները և տվյալ եկամուտի մասին կոնկրետ տեղեկություններ պարունակող այլ գրավոր փաստաթղթեր:

Ծախսերը

Խնդրում ենք նշան դնել **Այո** կամ **Ոչ** վանդակում, եթե Ձեր ընտանիքի անդամներից որևէ մեկը կարող է ստորև նշված տեսակի ծախսերը կատարել:

Նշան դրեք յուրաքանչյուր տեսակի ծախսի դիմացի վանդակում:

Երեխաների ապրուստադրամի վճարում Այո Ոչ

Այլ կարգի ապահովագրի մուծումներ Այո Ոչ

«Medicare»-ի ապահովագրի մուծումներ Այո Ոչ

Երեխայի խնամքի հետ կապված ծախսեր Այո Ոչ

Չափահաս անձի խնամքի հետ կապված ծախսեր Այո Ոչ

Կրթական ծախսեր Այո Ոչ

Եթե վերը նշվածներից որևէ մեկին **Այո** եք պատասխանել, խնդրում ենք այս թերթիկի հետ տվյալ ծախսի ապացույց ուղարկել: Ապացույց կարող են հանդիսանալ հետևյալ փաստաթղթերը. երեխայի ապրուստադրամի վերաբերյալ դատարանի որոշումները, ուսման վարձի մասին ծանուցումները, «Medicare»-ի կամ այլ ապահովագրական ընկերության կողմից ուղարկված մամակները, ապրանքագրերը կամ ստացականները և տվյալ ծախսի մասին կոնկրետ տեղեկություններ պարունակող այլ գրավոր փաստաթղթեր:

Մեզ տեղեկություններ տրամադրեք Ձեր սեփականության և գույքի մասին

Խնդրում ենք նշան դնել Այո կամ Ոչ վանդակում, եթե Ձեր ընտանիքի անդամներից որևէ մեկը ստորև նշված տեսակի սեփականություն ունի: Յարկավոր է նշան դնել ստորև նշված 1, 2 և 3 տողերից յուրաքանչյուրի դիմաց:

ԲԱԺԻՆ 1

1. Կանխիկ գումար կամ չկանխիկացված վճարագրեր
Եթե Այո, այստեղ նշեք գումարը \$ _____ Այո Ոչ
2. Ընթացիկ հաշիվ կամ խնայողական հաշիվ
Եթե Այո, ուղարկեք հաշվի քաղվածքների օրինակները, որոնք ցույց են տալիս
ներկա հաշվեկշիռը: Այո Ոչ
3. Դուք կամ Ձեր ընտանիքի որևէ անդամ մեկից ավելի փոխադրամիջոց ունի՞
(ավտոմոբիլ, մոտոցիկլ, բեռնատար): Այո Ոչ
4. Դուք կամ Ձեր ընտանիքի որևէ անդամ ունի՞ նավակ, ճանապարհորդական կցասայլ
կամ կցորդ: Այո Ոչ
**Եթե 3-րդ կամ 4-րդ հարցին Այո եք պատասխանել, խնդրում ենք ուղարկել սեփականության
կամ գրանցման փաստաթղթերի, առքուվաճառքի պայմանագրերի, վաճառքի ստացականների
կամ գնահատման փաստաթղթերի պատճենները:**
5. Խնդրում ենք ծանոթանալ սեփականության ստորև բերված ցուցակին:

Նշան դրեք այս վանդակում, եթե Ձեր ընտանիքի որևէ անդամի պատկանում է կամ եթե նա իր անվամբ
գրանցած ունի հետևյալ առարկաներից **մեկը կամ մեկից ավելին:**

Անշարժ գույք՝ բացի այն տնից, որում Դուք բնակվում եք (առանձնատներ, բնակարաններ՝ բազմաբնակարան
շենքում, շինություններ, շարժական տներ, ցկյանս գույք (life estates), համատեղ օգտագործվող ամառանոցներ),
բաժնետոմսեր, փոխադարձ հիմնադրամներ, «Individual Retirement Account»-ներ (IRA-ներ), «Keogh»-ներ կամ
աշխատանքի հետ կապված կենսաթոշակ, խնամառություններ, արգելափակված հաշիվներ (որոնց վրա գումար
կամ գույք է պահվում՝ տանը բնակվող՝ ընտանիքի որևէ անդամի օգտին), դատավճռով շահած գումարներ,
պարտքի մարման պայմանագրեր, ապրուստադրամի մասին դատարանի որոշումներ, մինչամուսնական
և հետամուսնական պայմանագրեր, մուրհակներ, հիպոթեկներ կամ խնամագրեր, առևտրային հաշիվներ,
առևտրային սեփականություն, նավթի և հանածոների իրավունքներ, \$100.00-ից ավելի արժողությամբ
թանկարժեք իրեր (բայց ո՛չ ամուսնական կամ նշանադրության մատանիներ կամ տոհմական թանկարժեք իրեր)
կամ \$500 կամ ավելի արժողությամբ ցանկացած այլ անշարժ գույք, անձնական իր կամ սեփականություն:

Եթե Դուք նշան **ԵՔ** դրել վանդակում, խնդրում ենք անցնել **2-րդ ԲԱԺԻՆ** (ստորև):

Եթե Դուք նշան **ՉԵՔ** դրել այս վանդակում, խնդրում ենք անցնել **3-րդ ԲԱԺԻՆ**՝ **6-րդ** էջում:

ԲԱԺԻՆ 2

Եթե Դուք նշան եք դրել վերը՝ **5-րդ համարի** տակ գտնվող վանդակում, խնդրում ենք լրացնել այս բաժինը և
պատասխանել ԲՈԼՈՐ հարցերին: Խնդրում ենք այս թերթիկի հետ գրավոր փաստաթղթեր տրամադրել ստորև նշված
բոլոր այն խմբերի համար, որոնց Այո եք պատասխանել: Նման փաստաթղթերի օրինակներ են՝ ապահովագրերը,
պայմանագրերը, խնամագրերը, առքուվաճառքի պայմանագրերը, դատարանի որոշումները, պարտքի մարման
պայմանագրերը, ֆինանսական հայտարարագրերը, առևտրային հարկագրերը, ապրանքագրերը, ստացականները,
թույլատրագրերը, շահույթի և վնասի տեղեկագրերը, ինչպես նաև սեփականության իրավունքը կամ օրինական
շահը ցույց տվող այլ փաստաթղթեր:

6. Բաժնետոմսեր կամ փոխադարձ հիմնադրամներ
Եթե Այո, խնդրում ենք ուղարկել քաղվածքների պատճենները կամ արժետոմսերի կամ
փոխադարձ հիմնադրամի հավաստագրերի պատճենները, որոնց վրա նշված
է բաժնետոմսերի թիվը: Այո Ոչ

7. «Individual Retirement Account»-ներ (IRA-ներ), «Keogh»-ներ, աշխատանքի հետ կապված կենսաթոշակ կամ կենսաթոշակային հաշիվներ, օրինակ՝ 401k կամ 457 հաշիվներ եթե Այո, խնդրում ենք ուղարկել Ձեր գործատուի, ֆինանսական հաստատության կամ վաճառանիջնորդի կողմից տրված ամենավերջին քաղվածքները, որոնց վրա նշված է հիմնագումարը և շահիդ, որը ստանում եք, կամ հաշվի կանխիկ գինը (գումարը վաղաժամ հանելու դեպքում նախատեսված տուգանքից հետո): Այո Ոչ

8. Տարեվճարներ կամ կյանքի ապահովագրություն Այո Ոչ

9. Գերեզմանի տեղեր, խնամառություններ, թաղման պայմանագրեր, թաղման ապահովագրություն Այո Ոչ

10. Խնամառություններ, արգելափակված հաշիվներ (որոնց վրա գումար կամ գույք է պահվում՝ տանը բնակվող՝ ընտանիքի որևէ անդամի օգտին) Այո Ոչ

11. Դատավճռով շահած գումարներ, պարտքի մարման պայմանագրեր, ապրուստադրամի մասին դատարանի որոշումներ, մինչամուսնական և հետամուսնական պայմանագրեր Այո Ոչ

12. Մուրհակներ, հիպոթեկներ կամ խնամագրեր եթե Դուք Այո եք պատասխանել **6-ից մինչև 12-րդ հարցերից** որևէ մեկին (վերը), խնդրում ենք տրամադրել մեզ ապահովագրերի, պայմանագրերի, խնամագրերի, առքուվաճառքի պայմանագրերի, դատարանի որոշումների, պարտքի մարման պայմանագրերի կամ հաշվի վերաբերյալ փաստաթղթերի պատճենները, որոնք ցույց են տալիս վճարումները, ներկա շուկայական արժեքները, հետգնման կանխիկ գումարը, հաշվեկշիռները, ներդրումները և բաշխումները: Այո Ոչ

13. \$100.00-ից ավելի արժողությամբ թանկարժեք իրեր (բայց ոչ ամուսնական կամ նշանադրության մատանիներ կամ տոհմական թանկարժեք իրեր) եթե Այո, խնդրում ենք ուղարկել վաճառքի ստացականների, գնահատումների, արժեքի հաշվարկի կամ ապահովագրման փաստաթղթերի պատճենները: Այո Ոչ

14. Առևտրային հաշիվներ և սեփականություն եթե Այո, խնդրում ենք ուղարկել հարկագրերը, ապրանքագրերը, ստացականները, թույլատրագրերը, շահույթի և վնասի տեղեկագրերը, կամ սեփականության իրավունքը, եկամուտը և/կամ ծախսերը ցույց տվող այլ փաստաթղթեր: Այո Ոչ

15. Ներկայումս Դուք՝ որպես սեփականություն, ունե՞ք առանձնատուն, բնակարան՝ բազմաբնակարան կամ համատիրական շենքում, ագարակ, հողամաս, շարժական տուն կամ ցկյանս գույք (life estate) (օգտագործման իրավունք) մի տանը, որը ներկայումս Ձեր տունն է կամ անցյալում Ձեր տունն է եղել: Այո Ոչ

Եթե Այո, Դուք այժմ այդ տա՞նն եք բնակվում:

Եթե Այո, խնդրում ենք այդ տան հասցեն նշել այստեղ և անցնել **16-րդ հարցին**:

Եթե Դուք ներկայումս այդ տանը չեք բնակվում, անցյալում ապրե՞լ եք դրանում և հույս ունե՞ք ապագայում երբևէ կբնակվեք դրանում՝ որպես Ձեր տանը: Այո Ոչ

Եթե Այո եք պատասխանել, անցե՛ք **16-րդ հարցին**:

Եթե **Ոչ** եք պատասխանել, Ձեր ընտանիքի ստորև նշված անդամներից որևէ մեկը կամ մի քանիսը ներկայումս ապրում են այդ տանը:

- Ձեր կինը կամ ամուսինը.
- մինչև 21 տարեկան երեխան.
- հաշմանդամ որդին կամ դուստրը.
- խնամյալ ազգականը, որը նշվում է հարկագրի վրա՝ որպես խնամյալ.
- հարազատ քույրը կամ եղբայրը, որը նույնպես հանդիսանում է տան սեփականատեր և Ձեր ծերանոց փոխադրվելուց առաջ առնվազն մեկ տարի բնակվել է դրանում.
- Ձեր ծերանոց փոխադրվելուց անմիջապես առաջ՝ առնվազն երկու տարի Ձեզ խնամելու նպատակով՝ Ձեզ հետ այդ տանը բնակված՝ ընտանիքի որևէ այլ անդամ, որպեսզի Դուք ի վիճակի լինեք տանն ապրել:

Այո Ոչ

Եթե **Այո** եք պատասխանել, անցեք **16-րդ հարցին**:

Եթե **Ոչ** եք պատասխանել, խնդրում ենք ուղարկել գույքահարկի ամենավերջին հաշվարկի կամ անշարժ գույքի համապատասխան որակավորում ունեցող գնահատողի կողմից կատարված գնահատման օրինակը: Մենք կօգտագործենք գույքի ամենացածր արժեքը:

16. Այլ անշարժ գույք, որը պատկանում է Ձեզ, բայց որում Դուք չեք բնակվում (օրինակ՝ բնակարաններ՝ բազմաբնակարան շենքում, շինություններ, շարժական տներ, ցլյանս գույք (life estates), համատեղ օգտագործվող ամառանոցներ)

Այո Ոչ

Եթե **Այո**, ապա այդ անշարժ գույքերից որևէ մեկը եկամուտ բերում է:

Եթե **Այո**, խնդրում ենք ուղարկել ամենավերջին վարձավճարի ստացականների և կոմունալ ծառայությունների, գույքահարկի, ապահովագրության, սպասարկման և վերանորոգման համար ներկայացված հաշիվների պատճենները:

17. Նավթի և հանածոների իրավունքներ

Այո Ոչ

Եթե Դուք **Այո** եք պատասխանել **15-րդ, 16-րդ կամ 17-րդ հարցերին**, խնդրում ենք ուղարկել հիպոթեկի փաստաթղթերի, գույքահարկի ամենավերջին հաշվարկի, գրանցման և սեփականության փաստաթղթերի պատճենները:

18. \$500 կամ ավելի արժողությամբ ցանկացած այլ անշարժ գույք, անձնական իր կամ սեփականություն:

Այո Ոչ

Եթե **Այո**, խնդրում ենք հայտարարագրեր ուղարկել գույքի և դրա արժեքի մասին:

19. Վերը՝ 2-ից 18-րդ հարցերում նշված գույքի կամ առարկաների մեջ կա՞ն այնպիսիք, որոնց օգնությամբ ֆինանսավորվել են բժշկական ծառայությունները կամ երաշխավորվել դրանց վճարումը:

Այո Ոչ

Եթե **Այո**, խնդրում ենք այս թերթիկի վերջում գտնվող «Լրացուցիչ դիտողությունների կամ տեղեկությունների» բաժնում, բացատրել և որպես ապացույց՝ կցել գրավադրման, փոխառության կամ ապահովման փաստաթղթերի պատճենները:

Այո Ոչ

20. Վերը՝ 2-ից 18-րդ հարցերում թվարկվածների մեջ կա՞ն այնպիսիք, որոնց համար Դուք գումար եք պարտք:

Այո Ոչ

Եթե **Այո**, խնդրում ենք ուղարկել գրավադրման, փոխառության կամ ապահովման փաստաթղթերի պատճենները:

21. Հավաստագրված «Երկարատև խնամքի հարցում Կալիֆոռնիայի համագործակցություն» (California Partnership for Long-Term Care) ապահովագիր

Այո Ոչ

Եթե **Այո**, խնդրում ենք ուղարկել Ձեր ապահովագրի պատճենը: Եթե Դուք վերը նշված ապահովագրով նպաստներ եք ստացել, խնդրում ենք ուղարկել Ձեր ստացած ամենավերջին «Նպաստների բացատրության» պատճենը:

ԲԱԺԻՆ 3

Ստորև նշված **22-23-րդ հարցերին** պատասխանեք **ՄԻԱՅՆ** այն դեպքում, եթե Դուք կամ Ձեր ընտանիքի որևէ անդամ դիմում է երկարատև խնամքի հաստատություն կամ ծերանոց փոխադրվելու համար կամ ներկա պահին գտնվում է այնտեղ: Եթե **Ոչ**, անցեք հաջորդ էջին, կարդացեք այն և ստորագրեք այս թերթիկը:

22. Եթե ներկայումս Դուք խնամքի հաստատության ծառայությունների մակարդակով «Medi-Cal» եք ստանում, ապա Դուք կամ Ձեր տանը բնակվող ընտանիքի որևէ անդամ վերջին 12 ամսվա ընթացքում որևէ սեփականություն վաճառե՞լ է կամ գումար տվե՞լ է: Այո Ոչ
Եթե **Այո**, խնդրում ենք այս թերթիկի վերջում գտնվող «Լրացուցիչ դիտողություններ կամ տեղեկություններ» բաժնում, բացատրել և ապացույց կցել:

23. Եթե Դուք դիմում եք խնամքի հաստատության ծառայությունների մակարդակով «Medi-Cal»-ի համար, ապա Դուք կամ Ձեր կինը/ամուսինը՝

A. վերջին 30 ամսվա (կամ $2\frac{1}{2}$ տարվա) ընթացքում որևէ սեփականություն վաճառե՞լ է կամ գումար տվե՞լ է. Այո Ոչ
Եթե **Այո**, խնդրում ենք այս թերթիկի վերջում գտնվող «Լրացուցիչ դիտողություններ կամ տեղեկություններ» բաժնում, բացատրել և ապացույց կցել:

B. վերջին 30 ամսվա (կամ $2\frac{1}{2}$ տարվա) ընթացքում խնամառության կամ որևէ այլ գործարքի մեջ այլ անձի օգտին գումար դրե՞լ է. Այո Ոչ
Եթե **Այո**, խնդրում ենք այս թերթիկի վերջում գտնվող «Լրացուցիչ դիտողություններ կամ տեղեկություններ» բաժնում, բացատրել և ապացույց կցել:

C. վերջին 30 ամսվա ընթացքում խնամառությունից կամ որևէ այլ գործարքից այլ անձի օգտին գումար հանե՞լ է: Այո Ոչ
Եթե **Այո**, խնդրում ենք այս թերթիկի վերջում գտնվող «Լրացուցիչ դիտողություններ կամ տեղեկություններ» բաժնում, բացատրել և ապացույց կցել:

Լրացուցիչ դիտողություններ կամ տեղեկություններ

Խնդրում ենք կարդալ և ստորագրել ստորև

Երբ ես ստորագրեմ ստորև, դա նշանակում է, որ՝

State of California-ի օրենսդրության համաձայն՝ դատական պատասխանատվության ենթարկվելու սպառնալիքի տակ, ես հայտարարում եմ հետևյալը.

- Ես հասկանում եմ այս դիմումի ձևի մեջ պարունակվող բոլոր հարցերը և իմ ունեցած տեղեկությունների համաձայն՝ իմ պատասխանները ճշմարտացի և ստույգ են: Եթե ես ինքս պատասխանը չեմ իմացել, ես փորձել եմ պատասխանն այնպիսի մեկի հետ ճշտել, ով գիտե:
- Ես գիտեմ, որ եթե ճշմարտությունը չասեմ, կարող եմ քաղաքացիական կամ քրեական պատասխանատվության ենթարկվել, այդ թվում՝ մինչև չորս տարվա ազատազրկման:
- Օրենքը սա է. California Penal Code Section 126:
- Ես գիտեմ, որ այս դիմումի մեջ նշված բոլոր տեղեկությունների օգնությամբ որոշում է կայացվելու այն մասին, թե արդյոք իմ ընտանիքի այն անդամները, որոնք դիմում են առողջության ապահովագրություն համար, համապատասխանում են այն ստանալու պահանջներին: Այս տեղեկությունները զաղտնի կպահվեն՝ ինչպես պահանջվում է դաշնային և California-ի օրենսդրությամբ:
- Ես համաձայն եմ 10 օրվա ընթացքում շրջանի աշխատակցին տեղյակ պահել (անձամբ այցելելով, հեռախոսով, էլեկտրոնային ուղերձով կամ ֆաքսով), եթե այս թերթիկի վրա իմ տրամադրած որևէ տվյալ կամ տեղեկություն փոխվի կամ պարզվի, որ տարբերվում է գրվածից:

Ստորագրություն՝ _____ Ամսաթիվը՝ _____
Դիմողի, պատասխանատու անձի կամ լիազոր ներկայացուցչի ստորագրությունը